նէ 'ի ժամանակագրաց. իսկ Մարաց 8 միոյն, ըստ ոմանց 7, և ըստ այլոց 5։

Այսոր գոհացուցիչ պատասխանը հան, գերձ եզրակացութեամբ վերջը թողլով առ ժամս կ'ըսենք. Բերեմ մարդ բասեան պատմութեան տարիւրն ևս ըստ ընդհանուր և դիւաւոր կէտերուն՝ այն վերը յիշած քաղդէացիէն մատեանն եղած է, հելլէն թարգմանութեամբ, և կամ անոր համաձայն հնոյն Հայաստանի երգերն, որոնց վրայ իբրև 'ի հիման, կանգնեցին Հայոց պատմութիւնը, մասամբ Աբիւղեանոս և իմաստուն ասորին, և մասամբ ալ Մ. Խորենացի, ճոխացընելով զայն Հայաստանի մինչև այն ժամանակ կենդանի մնացած՝ ստոյգ և բազմութիւն աւանդութեամբք վիպասանուն թեսև և թուղթեանց կոչուած երգերով և զրոյցներով։

Կը շարունակուի.

Հ. Բարսեղ Սարգիսեան

Ի ԳԵՐԵԶՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Սուրբ Գերեզման յոյժ գովելի,
Համայն ազանց ես ցանկալի.
Առ քեզ դիմեմք ապերասալի
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
Ամենաբեղեր դու Աբարչին,
Հանգըստարան անմահ փրկչին
Զարչարելոյն 'ի փայտ խաչին,
Լուսածաւալ սուրբ Գերեզման։
Այն որ 'ի նմին ահեղ գոչեաց՝
Երեքօրեայ 'ի քեզ ննջեաց.
Ինքըն զարթեաւ և զմեզ փրկեաց.
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
Դու ես պարծանք քրիստոնէից
Ցոյս յարութեան մեզ հոմայնից.
Ըզքեզ՝ Աստուած փառօք երից,
Լուսածաւալ սուրբ Գերեզման։
Ի սրտէրէից օրհնաբանիս
Ի քրտէրէից երկրպագիս,
Քան զարեգակն պայծառ փայլիս,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
Լուսապայծառ սուրբ Գերեզման,
Աստուածորդւոյն տեղի թագման,
Անմահութեան հոտոյն բուրման,
Լուսածաւալ սուրբ Գերեզման։
Սուրբ և մաքուր Գերեզման կոյս,
Քրիստոնէից պարծանք և յոյս,
Ի քէն բղխէ միշտ պայծառ լոյս,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
Ցոյժ փափագեմք օրհնեալ տեսոյդ
Եւ կարօտիմք քաղցրիկ գեղոյդ,
Երկրպագեմք քարիդ հողոյդ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման։
Արժանացո քում տեսութեան
Եւ բաց մեզ դուռն ողորմութեան,
Քանզի դին ելք անդին արեան.
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
Գերեզման ես լուսափայլեալ
Աքանչելափառ տաճար կազմեալ,
Ցեռան Աստուծոյ առն անուանեալ,
Լուսածաւալ Սուրբ Գերեզման։
Սարսափելի սուրբ հրեշտակաց
Եւ սոսկալի հոգեղինաց,
Դու յարկ եղեր Բանին կենաց,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
Ի քիմն անոյշ հոտ ծաւալի
Ըղսեամբս քո համբուրմի,
Զքեզ տեսողաց բիւր երանի,
Լուսածաւալ սուրբ Գերեզման։
ԸզԳերեզմանդ կնքեալ բանան,
Ցընծութեամբ 'ի ներքս ընթանան,
Զլոյս քո տեսեալ ուրախանան,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
Ի թաղելոյն 'ի քեզ՝ մայլեմք,
Արժանանալ տեսոյդ խնդրեմք,
Նըմա և քեզ երկրպագեմք,
Լուսածաւալ սուրբ Գերեզման։

(Ի ՁԵՌԱԳԻՐ ԵՐԳԱՐԱՆԷ)։

digitised by A.R.A.R.@